Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազումի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորություն:

Վերապատրաստող, մենթոր՝ Սոնա Եղիազարյան

Ուսուցիչ՝ Հռիփսիմե Հարությունյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն…….. 3

2. Դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը հասարակագիտություն դասավանդելիս……..…….6

3.Դասի նպատակ և դասավանդման վերջնարդյունք……12

4. Գնահատում……17

5. Հինգ քայլով դասի պլան հասարակագիտություն առարկայից……22

Սահիկաշար

Առաջարկ

file:///C:/Users/Admin/Downloads/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%AF.pdf

6.Եզրակացություն……25

7.Գրականություն……..……27

<<Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով պետք է հասնել այդ գիտելիքներին>>:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտական աշխատանքի թեման ընտրել եմ դասի պլանավորումը, համարելով արդիական, որովհետև ժամանակակից տեղեկատվական հասարակությունում մեր նպատակն է աջակցել սովորողներին հաղթահարելու ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները, ինչպես նաև անհետաքրքրությունը, որոշների համար կրթությունը դարփել է ոչ կարևոր, ինչը կարող է հանգեցնել սովորողի կյանքում անցանկալի վարքային դրսևորումների: Իսկ մեր՝ ուսուցիչներիս, նպատակն է դաստիարակել կարողունակություններով զինված հասարակության արժանի անհատներ, ովքեր կդրսևորեն գիտակցական վարքային գործունեություն և կդառնան պատասխանատու քաղաքացիներ:

Ուսուցչի կարևոր մասնագիտական գործառույթը դասի պլանավորումն է, որը նպաստում է դասապրոցեսի արդյունավետ դասավանդմանը: մենք պլանավորում և նախագծում ենք որոշակի նպատակների համապատասխանող ուսումնական ծրագրեր և գործողություններ: Մենք պլանավորում և նախագծում ենք որոշակի նպատակների համապատասխանող ուսումնական ծրագրեր ու գործողություններ: Աշակերտների պահանջները կանխորոշելու և դասավանդումն արդյունավետ իրականացնելու նպատակով մենք պետք է պլանավորենք նաև գնահատման գործընթացը: Դրանով մեզ, մեր աշակերտներին ու այլոց /ծնողներին ու վարչական աշխատողներին/ հնարավորություն է ընձեռնվում որոշել, թե արդյո՞ք աշակերտները յուրացրել և ըմբռնել են պահանջվող գիտելիքները: Ուսուցչի գործունեությունը նպատակային է, երբ հասնում է առաջադրված նպատակին: Իսկ առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է արդյունավետ պլանավորել դասը, որը կնպաստի ուսումնառության ընթացքում աշակերտի առաջադիմության բարձրացմանը:

Ինչպես նախագծման վրա հիմնված մյուս մասնագիտությունների պարագայում, այնպես էլ մեր աշխատանքը չափորոշիչներով է առաջնորդվում ու ձևավորվում, որոնցում հստակ պետք է սահմանել նպատակը, վերջնարդյունքը, այսինքն աշակերտներն ինչ պետք է իմանան և ինչ կկարողանան անել: Չափորոշիչներն այն հիմքն է, որն օգնում է մեզ որոշել ուսուցման և ուսումնառության առաջնահերթությունները, ինչպես նաև ուղղորդել ուսումնական ծրագրի ու գնահատման հնաքրների մշակման աշխատանքները: Ուսումնառությունը պլանավորելիս պետք է հստակ պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության, ինչպես նաև դասավանդման ոճերի մասին, որը հնարավորություն կտա ուսուցչին արդյունավետ օգտագործել դասաժամը:

Հանրակրթության ուսումնական հաստատություններում ուսուցչի գործունեությունն իր մեջ ներառում է առաջադրանքների ահռելի շրջանակ, որի հիմնական նպատակը սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների յուրացման և ուսուցման բարձր որակի ապահովումն է : Ուսուցիչը սովորողներին իրենց կարողություններին համապատասխան առաջադրանքներով ապահովելու և անհատական մոտեցում ցուցաբերելու գործընթացում անհրաժեշտ է արդյունավետ պլանավորել դասը: Ուսուցումը նպատակին հասնելու միջոց է: հստակ նպատակ ունենալը մեզ՝ մանկավարժներիս, օգնում է պլանավորման ընթացքում կենտրոնանալ նախատեսված արդյունքների վրա և դրանց ուղղված նպատակասլաց գործողություններ ձեռնարկել:

Դասի արդյունավետ պլանավորումն առավել արդիական է արդի տեղեկատվական հասարակությունում, երբ կարծես թե ունենալով պահանջվող մասնագիտությունը, խնդիր է դառնում այն իրողությունը, որ մարդը կարող է աշխատանք չգտնել, քանի որ նրա ստացած կրթությունը կարող է չհամապատասխանել արդի պահանջներին : Բայց ողջ կյանքի ընթացքում սովորելու գաղափարն ունի ավելի լայն իմաստ, որը վերաբերվում է մարդու ինքնակերտմանն ամբողջությամբ և ոչ միայն առանձին մասնագիտություն ձեռք բերելու առումով:Այսօրվա հարափոփոխ աշխարհում մարդկության առջև ծառացած

հիմնախնդիր է դառնում անընդհատ ինքնակրթվելը՝ սովորելու և ավելի ու ավելու ճկուն և ժամանակի պահանջներին համընթաց ընթանալու համար:Այս մոտեցման դեպքում կրթությունն ու ընդհանրապես հոգու աշխատանքն ինքն իր վրա դիտվում էորպես արժեքավոր, կյանքն իմաստավորող ու նպատակով լեցուն գործընթաց:

<<Եկեք չհավատանք նրանց, ովքեր ասում են, որ միայն ազատ մարդիկ պետք է լինեն կրթված: Եկեք հավատանք այն իմաստասերներին, որոնք ասում են, որ միայն կրթվածներն են ազատ>>:

Էպիկտետ

Այսպիսով, ինչպես Ջերոմ Բրուներն է գրել <<Կրթության գործընթաց>>ում, <<տարրական դպրոցում ուսուցանվող յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ մենք պետք է ինքներս մեզ հարց տանք , թե չափահասի համար կարևո՞ր է այդ բանն իմանալը, և որպես երեխա այդ բանն իմանալով՝ մարդը որքա՞ն ավելի լավ չափահաս կարող է դառնալ>>: Բացասական կամ անորոշ պատասխանը կնշանակի, որ <<այդ նյութն անհարկի ծանրաբեռնել է ուսումնական ծրագիրը>>: Հետևաբար դասի արդյունավետ պլանավորման նպատակն է կիրառել այնպիսի մեթոդներ, հնարներ, որի շնորհիվ սովորողները գործուն մասնակցություն կունենան գիտելիքի ձեռքբերման գործընթացում:

Դասի պլանավորման արդյունավետ եղանակների կիրառումը հասարակագիտության դասընթացում

Հասարակագիտությունը հասարակական գիտությունների ամբողջական ուսումնասիրությունն է, որը քաղաքացիական ակտիվության զարգացման միջոցով երիտասարդներին նախապատրաստում է պատասխանատու քաղաքացիներ դառնալուն: Ինչպես յուրաքանչյուր առարկայի, այնպես էլ հասարակագիտություն առարկայի արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է հասկանալ առարկայի նպատակներն ու խնդիրները և դրա հիման վրա պլանավորել դասը: Այսօր մանկավարժներս գիտակցում և ընդունում են, որ աշակերտները սովորում են միայն այն ժամանակ, երբ ցանկանում են սովորել և սովորում են միայն այն, ինչ ցանկանում են սովորել: Անշուշտ չի կարելի թերագնահատել ուսուցչի դերը, սկայն նույնիսկ լավագույն ուսուցիչը չի կարող ստիպել աշակերտներին սովորելու այն, ինչ նրանք չեն ցանկանում կամ անօգտակար են համարում իրենց համար:այնպես որ մեր կարևորագույն նպատակներից է այնպիսի աշակերտների ձևավորումը, որոնք ունակ կլինեն հստակ հասկանալու, թե ի՞նչ պետք է սովորեն և ինչպե՞ս: Որպեսզի օգնենք սովորողներին՝ ձեռք բերելու գիտռելիքներ և հմտություններ, նպաստենք նրանց՝ Ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացու դիրքորոշման ձևավորմանը, մեզ անհրաժեշտ են կրթական համակողմանի ծրագրեր և հմուտ ուսուցում, որի առանցքն է կազմում արդյունավետ դասավանդումը:

Հասարակագիտության արդյունավետ դասավանդումն սկսվում է առարկայի առանձնահատուկ նպատակների պարզ պատկերացումից, որոնց թվում են ուսումնական ծրագրի բաղադրիչ մասերը, գիտելիքները, ժողովրդավարական արժեքներն ու համոզմունքները, մտածելու, ինչպես նաև հասարակական ու քաղաքացիական մասնակցության հմտությունները: Աշակերտները կառուցում են իրենց գիտելիքները՝ ելնելով դպրոցի ներսում և դպրոցից դուրս իրենց կենսափորձից:

Ապագա ակտիվ քաղաքացի պատրաստելուն ուղղակիորեն նպաստում է աշակերների գործուն մասնակցությունը քաղաքական հարցերի հսարակական քննարկումներին, հատկապես երբ արդյունքում ծնվում են շոշոփելի հետևանքներ

ակնկալող գործողություններ ու որոշումներ: ՀԻմնահարցերը կրկին անգամ հաստատում են, որ հասարակագիտության դասավանդումը պետք է ունենա բովանդակության բազմազան աղբյուրներ և օգտագործի դասավանդման տարբեր մեթոդներմ և հնարքներ: Ուսումնառության ընթացքում աշակերտները պետք է իրազեկ լինեն այն մասին, որ դասավանդման ու կրթության արժևորման առանցքը պետք է լինի այն, թե ինչ չափով են այդ նպատակներն իրականացվում: Այստեղից

հետևում է, որ ուսուցման մեթոդներն ու վարժությունները պետք է պլանավորել այնպես, որ դրանք խրախուսեն, խթանեն աշակերտներին՝

-նոր ձեռք բերվող գիտելիքը կապել նախորդ գիտելիքի և կենսափորձի հետ

-ստեղծագործաբար և քննադատաբար մտածել իրենց յուրացրածի մասին

-կարողանալ օգտագործել այն իրական կյանքում

Առաջադրանքները հարկավոր է մշակել ու ներմուծել այնպես, որ դրանք աշակերտների ուշադրությունը բևեռեն կրթական արժեք ներկայացնող կարևոր մտքերի վրա:

կրթության հայտնի տեսաբան Ջերոմ Բրունները 20-րդ դարի 60-ական թվականներին առաջարկել է հայտնաբերման միջոցով սովորելու գաղափարը: Հասարակագիտություն սովորել, ըստ Բրունների, հնարավոր է միայն հասարակագիտությամբ զբաղվելով: Դա հնարավոր է անել երկու ձևով՝ անմշակ նյութի վրա աշխատելով կամ աշակերտոներին քիչ հետազոտված թեմաների մեջ ներքաշելով: աշակերտներին տրվում է անմշակ նյութ և առաջարկում համակարգել և մեկնաբանել այդ նյութը: Խրախուսվում են գիտական ենթադրություններ, վարկածներ առաջադրելու, դրանք ստուգելու, շտկելու և եզրահանգումներ անելու հմտությունները: աշակերտները կարող են իրենց լուծումները համեմատել գիտնականների առաջադրած լուծումների հետ: Բրունների հիմնական խնդիրն այն է, որ աշակերտները տեղեկատվության պասիվ կրողից վերածվեն ակտիվ կառուցողների:

Հասարակագիտության ուսուցման վերաբերյալ նման խորհրդածությունները պետք է ի հայտ գան աշակերտակենտրոն կրթական միջավայրում, որտեղ ուսուցիչը պետք է հետևի աշակերտների գիտելիքներին, հմտություններին , կարծիքներին և համոզմունքներին: այն ուսուցիչները, ովքեր դասավանդումը դասավանդումը կազմակերպում են աշակերտակենտրոն մոտեցման հիման վրա, գիտակցում են բովանդակային և մշակութային գիտելիքի վրա հիմնվելու կարևորությունը: Նրանք գիտակցում են, որ պետք է հաշվի առնեն մարդկության ստեղծած նախորդ գիտելիքն ու ընտրեն այնպիսի առաջադրանքներ, որոնք առավել արդյունավետորեն կհարթեն խոր, հիմնարար գիտելիքի կառուցման ուղին : Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նոր ուսումնառությունը նախորդ ուսումնառության վրա հիմնված գիտելիքի փոխանցում է , և այն շատ կարևոր ենթատեքստ ունի ուսուցման նախագծման համար, որից բխում է դասի արդյունավետ պլանավորումը՝ դասի պլանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաները առանձնահատուկ են, կրթությունը պետք է կազմակերպել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքների ու մոտեցումների կիրառմամբ՝ ապահովելով սովորողների ուսուցման գործընթացին ակտիվ մասնակցության բազմազան միջոցներ:/ Տիքա և ուրիշներ, 2018, Սվաջյա ն և ուրիշներ, 2020/: **Ուսումնառության համընդհանուր ձևավորումը** մարդու սովորելու կարողության գիտական հիմքերի վրա կազմված գործիք է, որը հնարավորություն է տալիս կատարելագործել և առավելագույնս հասանելի դարձնել ուսուցման գործընթացը բոլորի համար: Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ունի փ սկզբունք՝

1.ճանաչողական

2.ռազմավարական

3.հուզական

Դասի պլանը ուսուցչի կողմից ուսուցման ընթացքի մանրամասն նկարագրությունն է, կամ այլ կերպ ասած՝ «ուսուցման նախագիծը»: Ամենօրյա դասի պլանը մշակում է ուսուցիչը դասարանային ուսումնառությունը կանոնակարգելու և հստակեցնելու համար: Պլանավորման բաղադրիչները կարող են տարբեր լինել՝ կախված ուսուցչի, առարկայի առանձնահատկություններից և սովորողների

կարիքներից: Մյուս կողմից, կան նաև պահանջներ, որոնք պարտադիր են. դասի պլանը պետք է համապատասխանի տվյալ առարկայի համար հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված պահանջներին, առարկայական ծրագրերին և ուսուցչի կողմից նախօրոք կազմված տարեկան թեմատիկ պլանին: Դասի պլանը ուսուցչի՝ տվյալ դասը վարելու համար նախատեսված ուղեցույցն է: Արդյունավետ դասի պլանը ներառում է մի քանի տարրեր՝ ուսուցման (դասի) նպատակներ, դրանց հասնելուն ուղղված մեթոդներ, հնարներ, դասի ընթացքում կիրառվող դիդակտիկ նյութերի անվանումներ, հստակ փուլաբաժանում (դասի սկիզբ, նոր նյութի ներկայացում, ուղղորդված աշխատանք, դասի ամփոփում և այլն), գնահատման չափանիշներ: Այսպիսով դասի պլանավորումը ուսուցչի ստեղծագործական մտածողության արդյունքն է, նրա գիտելիքների, հմտությունների և կարողությունների արգասիքը:

գործընթաց է: Արդիական է կիրառել հետևյալ պահանջները դասը պլանավորելիս՝

1. Դասի պլանավորումը պետք է լինի գրավոր

2. Դասի պլանավորման ժամանակ պետք է հստակ սահմանվեն կարևոր նպատակները

3. Դասի պլանը պետք է ներառի դասավանդման համապատասխան մեթոդներ, հնարներ

4. Դասի պլանում պետք է արտացոլվի հին և նոր թեմաների, առկա և նոր գիտելիքների միջև շարունակականության ապահովումը

5. Դասի պլանավորման մեջ պետք է կիրառվեն կարևոր օրինակներ

6. Դասի պլանավորման ժամանակ պետք է փորձարկել ոգեշնչող և մոտիվացիոն մեթոդներ, խաղեր, վարժություններ՝ ապահովելով խթանող հուզական միջավայր:

7. Դասի պլանավորման ժամանակ յուրաքանչյուր փուլին հատկացվող րոպեները պետք է հստակորեն նշվեն:

Ժամանակակից հետազոտողներն առաջարկում են դասի ընթացքը բաժանել չորս կամ հինգ փուլերի:/1/

Առաջին փուլ. դասի սկիզբ, այն անվանվում է նաև խթանման փուլ, ներգրավման փուլ և այլն։ Դասի առաջին փուլի նպատակն է ներգրավել սովորողներին, հետաքրքրություն առաջացնել դասապրոցեսի, թեմայի նկատմամբ, քննարկել և սահմանել դասի նպատակները։ Ցանկալի է, որ նպատակները քննարկվեն սովորողների հետ, արձանագրվեն և լինեն սովորողների տեսադաշտում։ Սովորողները հստակ պետք է իմանան, թե ի՞նչ են սովորելու այսօր, և ինչու՞ է դա կարևոր։
Երկրորդ փուլ. նոր նյութի ներկայացում։ Ուսուցիչը սկսում է ներկայացնել նոր նյութը։ Կարևոր է, որպեսզի աշակերտները ներգրավված լինեն նոր նյութի ներկայացման պրոցեսի մեջ. դա աշակերտակենտրոն ուսուցման առանցքային բաղադրիչներից է։ Աշակերտների՝ արդեն ունեցած գիտելիքը կապվում է նոր նյութի հետ։ Թեմայի ներկայացումը պետք է ներառի դիդակտիկ նյութերի, սահիկաշարի օգտագործում, պետք է ուղեկցվի ձայնագրությունների, տեսանյութերի կիրառմամբ։ Պարբերաբար պետք է կատարվեն ընկալման ստուգումներ, որպեսզի պարզ լինի, թե որքանո՞վ են աշակերտները հասկացել նոր նյութը։ Այստեղ շատ կարևոր են նաև համեմատությունները, որոնք օգնում են սովորողին ավելի լավ հասկանալ նյութը։ Նոր թեման պետք է կապվի արդի աշխարհի և աշակերտի առօրյայի հետ, ուսուցիչը պետք է տեսնի (գտնի) այդ կապը՝ ցույց տալու համար, թե սովորողի կյանքում երբ և ինչպիսի պայմաններում կարող է օգտակար լինել այսօր ստացած գիտելիքը։
Երրորդ փուլ. խմբային կամ զույգերով աշխատանք։ Այս փուլում սովորողները համագործակցային աշխատանքի միջոցով կիրառում են նոր սովորած գիտելիքները։ Կարևոր է, որպեսզի տվյալ աշխատանքի ընթացքում աշակերտներին տրվող հանձնարարությունները բխեն դասի նպատակից, միտված լինեն բարձր կարգի մտածողության զարգացմանը։ Այս աշխատանքը, բացի ակադեմիական գիտելիքն ամրապնդելուց, զարգացնում է սովորողների համագործակցային, բանակցային և թիմային աշխատանքի հմտությունները, 133 որոնք չափազանց կարևոր են արդի աշխարհում։ Ցանկալի է, որ աշխատանքի կատարման ընթացքում ուսուցիչը և/կամ

օգնականը մոտենան խմբերին կամ զույգերին և ուղղորդեն վերջիններիս:
Չորրորդ փուլ. ինքնուրույն աշխատանք։ Ի տարբերություն նախորդ աշխատանքի, այստեղ սովորողները պետք է ինքնուրույն կիրառեն սեփական գիտելիքը՝ առանց ուղղորդումների։ Եթե մաթեմատիկայի պարագայում ինքնուրույն աշխատանքը կարող է խնդիրների և/կամ վարժությունների լուծում լինել, ապա հումանիտար առարկաների դեպքում կարող են լինել հարց/հարցեր, թեստային կամ ընդարձակ շարադրանք պարունակող առաջադրանքներ։
Հինգերորդ փուլ. դասի ավարտ, ամփոփում կամ կշռադատման փուլ։ Եթե դասի սկզբնական հատվածում դասավանդողը սովորողներին մոտիվացնելու, հետաքրքրություն առաջացնելու և դասապրոցեսի մեջ ներգրավելու գործառույթ է իրականացնում, ապա դասի ավարտական փուլում անդրադարձ է կատարվում տվյալ դասի ընթացքում սովորածին։ Կարևոր է ևս մեկ անգամ դասի նպատակին (նպատակներին) անդրադառնալը։ Ամփոփման պարզ տարբերակ է դասարանին «Ի՞նչ սովորեցինք այսօր» հարցն ուղղելը։ Կարելի է խաղալ «սիրում եմ - չեմ սիրում», «ճիշտ-սխալ-չգիտեմ» խաղերը, որոնք հնարավորություն են տալիս սովորողներից արագ հետադարձ կապ ստանալ դասի բովանդակության և ընթացքի վերաբերյալ։ Դասի ավարտական փուլում, ըստ ուսուցչի հայեցողության, կարող է հանձնարարվել նաև տնային աշխատանք։ Վերոնշյալ քայլաշարը վերաբերում է 5 քայլով դասապլանին։ Սակայն դասերը կարող են պլանավորվել նաև 3 կամ 4 քայլով՝ կախված դասավանդողի նախընտրությունից, թեմայի և սովորողների առանձնահատկություններից:

Հասարակագիտության դասավանդումը պետք է արդյունավետ լինի և՛ ուսուցիչների, և՛աշակերտների համար։ Բովանդակությունը պետք է արժեք

ներկայացնի, քանի որ նրանով է պայմանավորված առաջընթացը դեպի հասաչրակական փոխըմբռնում և քաղաքացիական կարևոր խնդիրներ: Նպատակային առաջադրանքներն ու վարժությունները, ինչպես նաև գնահատման ռազմավարություններն աշակերտների ուշադրությունը հրավիրում են ուսումնառության առանցքային գաղափարների վրա: Փորձառու ուսուցիչները քաջալերում են աշակերտներին այդ գաղափարները կապել իրենց նախորդ գիտելիքի ու կենսափորձի հետ, ստեղծագործաբար ու քննադատաբար քննարկել դրանց հասարակական ենթատեքստը:

1.<<Ներառող դասավանդում>> , էջ 132-133https://hmk.am/nerarogh-dasavandum-metodakan-dzernark-mankavarzhneri-hamar/

Դասի նպատակ և դասավանդման վերջնարդյունք

Երբ մենք խոսում ենք հաջողված կրթությունից, պետք է կարևորենք դասի պլանավորման սկզբունքները, որպեսզի դասը լինի նպատակային՝ յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքներին համապատասխան: Հասարակագիտության առարկայի դասավանդման և ուսումնառությունն արդյունավետ են, երբ դրանք

ա. նպատակային են և ինտեգրված

բ. արժեքների վրա հիմնված

գ. Խնդիրներ առաջադրող/խնդրահարույց իրավիճակ/

Նպատակն ակնկալվող արդյունքի գիտակցված պատկերն է, որին հասնելու է ուղղված մարդու գործունեությունը: Նպատակ դնելու կարողությունը մարդու կարևոր բնութագրերից է: Մեծ նպատակները չեն կարող միանգամից իրականանալ: Դրա համար անհրաժեշտ է մեծ նպատակները մասնատել փոքր նպատակների, ըստ դրա որոշել, թե այդ փոքր նպատակներին հասնելու համար ինչպիսի գործողություններ պետք է կատարել և ինչ ժամկետներում: Պետք է ժամանակի ամեն փուլի ավարտին ինքներս մեզ հաշվետու լինենք: <<Կատարե՞լ եմ արդյոք այն ամենը, ինչ պետք է անեի ժամանակի տվյալ պահին: Եթե՝ ոչ, ապա հաջորդ փուլի համար ի՞նչ լրացուցիչ ջանքեր պետք է ներդնեմ, որպեսզի լրացնեմ բացը>>:

Հասարակագիտության արդյունավետ դասավանդման համար անհրաժեշտ է նախ և առաջ հստակորեն հասկանալ առարկայի նպատակներն ու խնդիրները: Հասարակագիտության նպատակների ձևակերպման, սահմանման հարցում մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ: նշենք մի քանի մոտեցում, որոնք կարող են օգտակար լինել ուսուցիչների համար: Մեր նպատակն է ունենալ աշակերտներ, ովքեր.

ա. արժևորում են ուսումնառությունը հասարակագիտության ոլորտում, բացահայտում, վերլուծում և լուծում են բազմակարծիք հասարակությանը բնորոշ հիմնախնդիրներ

բ. Հաղորդակցվում են որպես ժողովրդավարական հասարակության պատասխանատու անհատներ և համագործակցող անդամներ

Այսպիսով դասի նպատակների հստակեցումը օգնում է սովորողներին հասկանալ, թե իրենք ի՞նչ են սովորելու տվյալ դասի արդյունքում: Դասի նպատակները նաև օգնում են գնահատելու դասի արդյունավետությունը: Դասի վարման սկզբունքների հստակեցումն օգնում է սովորողներին հասկանալ, թե իրենք պետք է ինչ անեն դասի նպատակներին հասնելու համար: Այն պետք է անհատական լինի և համապատասխանի պլանավորած արդյունքին: <<Նպատակները լինում են տարբաղդատվող, ինչը նշանակում է, որ առկա են հնարավորություններ և միջոցներ պարզելու՝ նպատակը հաղթահարված է , թե ոչ>>/ներառող դասավանդում, էջ 134-135/Նպատակը պետք է լինի.

Ն	Հստակ
Պ	Հասկանալի
Ա	Գիտակցված
Տ	Ցանկալի արդյունքը նկարագրող
Ա	Խթանող/գործողության մղող/
Կ	Ճշգրիտ

նպատակները լինում են՝

Ուսուցողական նպատակ	Դաստիարակչական նպատակ	Զարգացնող նպատակ	Դիդակտիկ նպատակ

Անհրաժեշտ է նպատակը գրել գրատախտակին: Կարևոր է նպատակադրման հնարների կիրառումը: Նպատակադրման հնարները կարող են լինել՝

տեսողական	**լսողական**
թեմա-հարց հասկացությունների հետ աշխատանք <<վառ կետի>> իրավիճակ բացահայտում կռահում խնդրահարույց իրավիճակ խմբավորում	ամփոփիչ երկխոսություն գտնել բառը բացառում նախորդ դասի խնդիր

Կրթական վերջնարդյունքներն ակնկալվող այնպիսի ցուցիչներ են, որոնք նկարագրում են, թե ուսումնառության շրջանի ավարտին ինչ պետք է գիտենա/իմանա, հասկանա և/կամ ի վիճակի լինի կատարելու սովորողը: Դրանք կարող են վերաբերել ինչպես առանձին դասընթացին, մոդուլին կամ ուսումնառության որոշակի շրջանին, այնպես էլ ամբողջական ծրագրին: https://kznakhimnadram.blogspot.com/2021/09/blog-post_18.html

Կրթության զարգացման ժամանակակից փուլում մեծ տարածում են ստացել ուսուցման վերջնարդյունքների աստիճանակարգերը (տաքսոնոմիաները): Դրանք նպատակ ունեն տարբերակելու ուսուցման տարբեր մակարդակները և ուսուցիչներին ու ուսումնական ծրագրեր մշակողներին օգնել ուսուցումն ավելի բազմազան դարձնելու, սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ ու կարողություններ զարգացնելու հարցերում: Հայալեզու մանկավարժական գրականության մեջ, թերևս, ամենից հաճախ ներկայացվում է Բ. Բլումի

աստիճանակարգումը : 20-րդ դարի կեսերին ձևակերպված այս աստիճանակարգումը նպատակ ուներ սահմանելու ուսուցման բազմազան վերջնարդյունքները՝ նշելով, որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև՝ ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրումը և արժևորումը: Այս տաքսոնոմիան կոգնիտիվ/մտավոր ունակությունների և կրթական ձեռքբերումների հիերարխիկ դասակարգում է: Այն հիմնականում ներկայացվում է բուրգի տեսքով, ինչպես օրինակ՝ Մասլոուի «մարդու պահանջմունքների» հիերարխիան է, քանի որ յուրաքանչյուր մակարդակ կախված է նախորդ մակարդակի ձեռքբերումից: Չնայած Բլումի տաքսոնոմիան ի սկզբանե նախատեսված է եղել սովորողներին գնահատելու համար, այսօր լայնորեն կիրառվում է մի շարք նպատակներով: Այն օգնում է ուսուցիչներին սովորեցնելու, իսկ աշակերտներին՝ սովորելու գործընթացում: Ուսուցիչը կարող է այս բուրգը կիրառել հետևյալ աշխատանքների կազմակերպման և ուսումնական նպատակների ապահովման համար՝

- գնահատում
- դասի պլանավորում
- դասի բարդության գնահատում
- թեստերի/հանձնարարությունների բարդության գնահատում
- չափորոշիչների կիրառման ուղեցույցների մշակում
- առցանց դասընթացների մշակում
- սեփական ունակությունների գնահատում
- սովորողների՝ չափորոշիչներով նկարագրված ուսումնական վերջնարդյունքների ապահովում:

Այս տաքսոնոմիան ստեղծվել է Բենջամին Բլումի կողմից 1956 թ-ին՝ որպես ուսումնական վերջանդյունքների և նպատակների դասակարգման ձև: Մտավոր ունակությունների սկզբնական դասավորվածությունը հետևյալն էր՝

Գիտելիք

վերարտադրում

կիրառություն

վերլուծություն

համադրություն

գնահատում:

Այնուհետև այս շրջանակը վերանայվեց և 2001 թ-ին վերահրապարակվեց փոփոխված տարբերակը՝ հեղինակներ Լորին Անդերսոնի և Դավիթ Կրաթվոլի կողմից: Հիմնական փոփոխությունը հիերարխիայի ամենաբարդ՝ ստեղծագործելու ունակության առանձնացումն էր:

Բլյումի տաքսոնոմիայի օգնությամբ մենք կարող ենք օբյեկտիվորեն գնահատել դասի արդյունավետությունը, մեր առջև դրված նպատակների արդյունքը՝ վերջնարդյունքը:

Բլումը իր տաքսոնոմիայի միջոցով դասակարգել երեխաների մտավոր ունակություններն՝ ըստ հաջորդականության: Իր քառասնամյա ակտիվ մանկավարժական գործունեության ընթացքում Բլումը եկել է հետևյալ եզրահանգման. «Այն, ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը: Ամեն ինչ կախված է նախորդող և ներկա ուսուցման պայմաններից և միջավայրից»: Ըստ նրա՝ յուրաքանչյուր ուսուցման միջավայրում շատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բուրգի մակարդակներն աստիճանաբար ապահովելու ուղղությամբ: Ստորին մակարդակների ունակությունները չեն պահանջում մտավոր բարձր կարողությունների դրսևորում, բայց ապահովում են սովորելու կարևոր հիմքը: Մինչդեռ բուրգի բարձր մակարդակները պահանջում են խորքային ուսուցում, որտեղ ավելի բարդ աստիճանի մտավոր գործընթացներ են տեղի ունենում: Ակամայից ենթադրվում է, որ սովորողը կարող է դրսևորել նման մտածողություն միայն այն պարագայում, երբ վարժ տիրապետում է բուրգի ստորին մակարդակների ունակություններին: Օգտագործելով այս դասակարգումը՝ մանկավարժները կարող են արդյունավետ սահմանել ուսումնական գործընթացի վերջնարդյունքներ՝ ըստ առաջնահերթության և ուսումնական ծրագրի կառուցվածքի, ստեղծել դասի պլաններ, որոնք կներառեն համապատասխան ուսումնական նյութերը և մեթոդական հանձնարարականները՝ սովորողներին առաջնորդելով դեպի վեր բուրգի

մակարդակներով: Բլումի տաքսոնոմիայի օգնությամբ հնարավոր է գտնել խզումը աշակերտների իրական և անհրաժեշտ գիտելիքների միջև, երևան հանել այն, ինչ աշակերտները չգիտեն և այն, ինչ հարկավոր է սովորել բարձր մտավոր ունակությունների ձեռքբերման համար: Այսպիսով, եթե դասի նպատակը ուսուցչի կողմից սահմանված նպատակն է, ապա դասի վերջնարդյունքներն այն կոնկրետ, չափելի գիտելիքներն ու հմտություններն են, որոնք սովորողները ձեռք կբերեն դասընթացի ավարտին:

Գնահատում

Այսպիսով, դասավանդման գործընթացը համարվում է արդյունավետ, երբ մենք՝ ուսուցիչներս, սովորողների ուսումնառության գործընթացում՝ ՀՊՉ-ի սկզբունքների հիման վրա ձևավորենք կարողունակություն՝ ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար: Չափորոշիչները և առաջադիմության հետապնդող նպատակները հիմք են դառնում սովորողների գնահատման համար, որը դառնում է մեր նպատակի վերջնարդյունքը: Ուսուցչի պարտականությունն է ուսուցանել և գնահատել՝ հիմքում դնելով առաջադիմության հետապնդվող նպատակները/կարողունակություն, վերջնարդյունք/

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները սահմանելու համար հիմք է ընդունվում <<Հանրակրթության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի 26.17 կետը:

1. Սույն չափանիշներով սահմանվում են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) սովորողների գնահատման (այսուհետ՝ Գնահատում) հետ կապված իրավահարաբերությունները:

2. Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած

գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

3. Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

4. Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

5. Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

7. Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Սովորողի գնահատման տեսակները	**Նպատակը**	**Ձևերը**
Հայտորոշիչ գնահատում	բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն	1)թեստ կամ գրավոր այլ աշխատանք. 2) բանավոր հարցում. 3) բաց հարցերով քննարկում.

	ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ:	
Ձևավորող գնահատում	Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:	1) գրավոր կարճ հարցում (թեստ). 2) բանավոր հարցում. 3) գրավոր աշխատանք. 4) գործնական (լաբորատոր) աշխատանք. 5) տնային աշխատանք. 6) նախագծային աշխատանք. 7) քննարկում, բանավեճ. 8) այլ:
Ամփոփիչ գնահատում -միավորային -բնութագրող	. Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի	Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի

	ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով: .	հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում: .
Միավորային գնահատում	**Միավորային գնահատման** կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է: 31. Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով: 32. Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած: 33. Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:	**Միավորային գնահատումը** կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝ 1) թեստ. 2) բանավոր հարցում. 3) գրավոր աշխատանք. 4) գործնական (լաբորատոր) աշխատանք. 5) նախագծային աշխատանք. 6) այլ:
Բնութագրող գնահատում	**Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը** կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի	**Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝** 1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

	արդյունքներն ամրագրելու նպատակով: Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:	2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել. 3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Անդրադարձ կատարելու մոդելավորումը նույնպես շատ կարևոր է: Երբեմն անհրաժեշտ է դասի ընթացքը կարճացնել, որպեսզի անդրադարձ կատարելու համար ժամանակ մնա: Դասի անդրադարձը մի քանի նպատակների է ծառայում, դասի անդրադարձը կազմակերպելիս նույնպես պետք է ունենալ նպատակ.

1. Գնահատել, թե՞ արդյոք դասի նպատակներին հասել ենք
2. Գնահատել, թե՞արդյոք դասի ընթացքում մասնակիցների մոտ արժեքային փոփոխություն է տեղի ունեցել
3. Սովորածը կիրառել իրական կյանքում
4. Ի՞նչ կարողունակություններ ենք ձևավորել
5. Հնարավորությունէ եղել քննարկել կամ գնահատել այն որոշումները, որոնք կայացվել էին խմբային աշխատանքի կամ մոդելավորման ժամանակ
6. Գնահատել խմբային աշխատանքի արդյունավետությունը և առաջարկություններ ներկայացնել, թե ինչպես կարելի է տվյալ դասը հաջորդ անգամ ավելի լավ իրականացնել
7. Նոր փորձառություն ձեռք բերել ապագա դասերի համար

   Եթե անդրադարձի համար ժամանակ չեք տրամադրում, սովորածը չի յուրացվում

Դասի պլան

Ուսուցչի անունը՝ Հարությունյան Հռիփսիմե **Առարկան՝** հասարակագիտություն
Դասարանը՝ 10դդ Ամիս, ամսաթիվ ՝ 17.04.2023 Դասի տևողությունը՝45րոպե
Նոր դասի թեման՝ Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները
Անցած դասի թեման՝ Առաջարկ
Դասի նպատակը՝

Կիմանան արտադրության գործոնների և գործոնային եկամուտների մասին

Կընկալեն կապիտալի՝որպես արտադրության գործոնի բավանդակության և տոկոսի՝ որպես գործոնային եկամտի էության մասին

Կներկայացնեն հողի՝որպես արտադրության գործոնի, առանձնահատկությունները, կսահմանեն ռենտան

Վերջնարդյունքներ՝

Կկարողանան ներկայացնել շահույթի դերը ազատ ձեռնարկատիրական համակարգում
Կտարբերակեն աշխատավարձի վրա ազդող շուկայական և ոչ շուկայական գործոնները

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ
տեսաձայնային և թվային միջոցներ .
Գրատախտակ, պաստառ, աշխատանքային տետր, մարկերներ, սահիկաշար, դասագիրք,ՏՀՏ
Միջառարկայական կապ ՝
Հանրահաշիվ, աշխարհագրություն, պատմություն
Մեթոդներ՝զրույց, հարց ու պատասխան, գործնական աշխատանք/գծակարգ, աղյուսակ/
Խճանկարի մեթոդ,

Դասի ընթացքը .

Քայլ 1. Դասի սկիզբ / խթանում/ / 5-7 րոպե /*Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչո՞ւ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նախկին գիտելիքի հետ*

Էաձև աղյուսակի միջոցով գրատախտակին կազմակերպել մտագրոհ, վեր հանել աշակերտների
գիտելիքները պահանջարկի և առաջարկի մասին, մեկնաբանեն թե ինչ է տեղի ունենում բարիքների շուկայում, երբ առկա է դրանց ավելցուկ կամ պակասորդ:

Քայլ 2. Նոր նյութի ներկայացում: / 15-20 րոպե */Ի՞նչ է սովորելու աշակերտը: Ինչո՞ւ են սովորում այդ նյութը: Որո՞նք են ներկայացվող նյութի կարևոր դրույթները:*

Պատկերացում կկազմեն աշխատանքի՝ որպես արտադրության գործոնի մասին
Կիմանան աշխատավարձի՝որպես գործոնային եկամտի մասին
Կընկալեն կապիտալի՝ որպես արտադրության գործոնի բովանդակությունը
Կհասկանան տոկոսի՝որպես գործոնային եկամտի էությունը
Կնկարագրեն հողի՝որպես արտադրության գործոնի առանձնահատկությունները և կսահմանեն ռենտան:

Քայլ 3.Ուղղորդված գործնական աշխատանք:/7-15որպե/ *Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին համագործակցված աշխատելու, ուսուցչի ուղղորդմամբ կատարելու գործնական աշխատանք տրված նյութի վերաբերյալ:*
Դասարանը բաժանել խմբերի
Կիրառել<<խճանկար>>մեթոդը, գործնական աշխատանքի տեսքով ըստ խմբերի սովորողները ներկայացնեն թեմայի գլխավոր գաղափարները, անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է շտկել, ուղղորդել, կարելի է նաև որպես գործնական աշխատանք կազմել սահիկաշար և ներկայացնել
Աշակերտների կողմից կատարված խմբային աշխատանքի սահիկաշար
Սահիկաշար
Առաջարկ, աշխատանք և աշխատավարձ
Սահիկաշար՝ Կապիտալ և տոկոս, հող և ռենտա

Քայլ 4. Ինքնուրույն աշխատանք / իմաստավորում/ / 3-5 րոպե /: *Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիսաշակերտներին ինքնուրույն աշխատելու: Ինչպե՞ս են աշակերտները ինքնուրույն կիրառում*

Սահմանել նվազագույն աշխատավարձը

Քայլ 5. Դասի ավարտ / կշռադատում/: *Ամփոփվում են դասի կարևոր մասերը, տրվում են տնային առաջադրանքներ:* ***/2-5 րոպե/***

Անդրադառնալ դասի առանցքային գաղափարներին

Գնահատում՝ __կիրառել ձևավորող գնահատում_
Ձևավորված կոմպետենցիաներ՝ -

1. Լեզվական գրագիտություն և կարողունակություն
2. Սովորել սովորելու կարողունակություն
3. Ինքբաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. Թվային և մեդիա կարողունակություն
5. Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
6. Տնտսական կարողունակություն

Տնային հանձնարարություն՝ __Պատասխանել դասավերջի 5րդ և 6րդ հարցերին__

Եզրակացություն

Այսպիսով, հասարակագիտության արդյունավետ դասավանդման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում նպատակին, վերջնարդյունքին, դասի ընթացքին, անդրադարձին, ձևավորող գնահատմանը, որոնց շնորհիվ աշակերտները յուրացնում են դասը: Օրինակ էքսկուրսիա կազմակերպելիս, փոխանակ քարտեզի վրա տեսարժան վայրը նշելու, աշակերտները կարող են ընտրել որևէ երթուղի և ուրվագծել այն վայրերը, որոնք ճամփորդության ընթացքում կտեսնի ճանապարհորդը: Այսպիսով, աշակերտներին առաջադրվեց մտացածին խնդիր, որի հանգուցալուծման համար անհրաժեշտ է մտադրություն, անձի մասնակցություն, ընտրություն և նույնիսկ ստեղծագործական մոտեցում: Այսպիսով, ուսուցիչն ինքն է հանդես գալիս

Հասարակագիտության արդյունավետ դասավանդման և ուսումնառության նկատմամբ նման մոտեցումը խոսում է այն մասին, որ ուսուցիչն այդ մոտեցումն օգտագործում է ուսուցումն աշակերտներին հարմարացնելու և արժևորելու համար: Ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի քաղաքացիական կրթության պահանջներին և ըստ դրանց պլանավորի հասարակագիտության դասավանդումն ու կարգավորի իր աշխատանքը՝ աշակերտներից ստացված հետադարձ կապի ու մասնագիտական գիտելիքների աճին համապատասխան: Հասարակագիտության արդյունավետ դասավանդումն ինտեգրված է ժամանակի ու տարածության մեջ և անցյալի կենսափորձը կապում է ապագայի հետ: Այն աշակերտներին օգնում է գնահատել հասարակագիտության դերը անցյալում, այլ մշակույթներում, համայնքում, իր ապրած միջավայրում, Հայաստանում: Հասարակագիտության արդյունավետ դասավանդումը գիտելիքի, հմտությունների, համոզմունքների, արժեքների և գործողությունների նկատմամբ վերաբերմունքի ինտեգրում է: Հետևաբար հասարակագիտության ուսուցիչները, ի թիվս այլ պարտականությունների, պարտավոր են դասարանում ավելի մեծ ուշադրություն դարձնել կերպարի և քաղաքացիական արժանիքների դասավանդմանը: Եթե կրթությունն արտացոլում է հասարակության պահանջմունքները, ապա հասարակագիտություն սովորողները դպրոցն ավարտելու են իրական կյանքի պայմաններին հարմարվելու որոշակի կարողություններով: այսպիսով, ոչ մի աշակերտ չպետք է ավարտի ավագ դպրոցն

առանց իր կյանքի հետագա մի քանի տարիների համար մկոնկրետ պլան ունենալու: Ինչպես նշում է Արիստոտելը, , մենք քաղաքական կենդանիներ ենք, մեր ուղեղները հասարակական հարաբերությունների, խճճված ու բարդ փոխկապակակցվածությունների պտուղներ են: Կրթությունն իրական կյանքն է, հավերժ մրցություն հակադրվող շահերի, համոզմունքների և պահանջմունքների միջև:

Գրականության ցանկ

1. Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ <<Ուսուցչի օգնականի ձեռնարկ>>, Երևան 2022
2. Ա. Հ սվաջյան և ուրիշներ <<Ներառող դասավանդում>>, ՀՄԿ, Երևան 2023
3. Ս. Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>>, Երևան 2020
4. Ս. Պետրոսյան , Ս. Խաչատրյան <<Հասարակագիտության ինտեգրված ուսուցում>>, Երևան, Լուսաբաց 2006
5. Ս. Պետրոսյան , Ս. Խաչատրյան և ուրիշներ <<Հասարակագիտության ինտեգրված ուսուցում>>, Երևան, Տիգրան Մեծ 2005

6.<<Մարդ և հասարակագիտություն>>, գիտամեթոդական վերլուծական ամսագրեր

7. arlis.am –Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն <<Հանրակրթության մասին ՀՀ օրենքը>>, 2023թ